ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ

0025, ք. Երևան, Նալբանդյան փ. 130 ☎ 596-975, 560-962, 587-139

28.08.2023 No 23/1-2990 ՁԵՐ No _____

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ
Շուշան Դոյդոյանին
Ք. Երևան 0010, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ,
Հեռ.՝ +37491700974
Էլ. հասցե՝ foi@foi.am,

Հարգելի՛ տիկին Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր հարցմանը հայտնում ենք, որ 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2023թ հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՆԳՆ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնում 2021թ ընդունված ՀՀ ՔՕ 340 հոդվածի հատկանիշներով հանցագործության դեպքեր չեն արձանագրվել:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ 2022թ 1-ին կիսամյակի ընթացքում, մինչև 2021թ ընդունված ՀՀ ՔՕ ուժի մեջ մտնելը, ներկայումս ուժը կորցրած 2003թ ՀՀ ՔՕ 235.1 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով արձանագրվել է հանցագործության 6 դեպք, որոնցից 1-ը ուղարկվել է դատարան, 1-ը կարճվել է վաղեմության ժամկետն անցնելու հիմքով, իսկ 4-ը գտնվում են նախաքննության փուլում:

Վերը նշված հանցագործությունները վերաբերում են քաղաքացիների կողմից ներկրված ավտոմեքենաների բեռնախցիկներում հայտնաբերված պայթուցիկ նյութերի կամ այլ ռազմամթերքի հայտնաբերման փաստերին, դրանցից 5-ով վարույթն իրականացնում են ՀՀ ՊԵԿ քննչական մարմինները, իսկ կարճված գործով՝ ՀՀ քննչական կոմիտեի Արարատի քննչական բաժինը:

Հարգանքով՝

Պետի տեղակալ,
ոստիկանության գնդապետ **Ա. Պողոսյան**

Կատարող՝ պետի տեղակալ Ա.Պողոսյան
Հեռ. 010-596679